

Արձանագրություն №3/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. նոյեմբերի 19-ին կայացած թիվ 3 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 66-ը (վաթսունվեցը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը:

Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Մինչ նիստը սկսելը գիտական խորհրդի անդամները մեկ րոպե լռությամբ հարգեցին պատերազմում զոհված հայրենակիցների ու համալսարանականների հիշատակը: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանն առաջարկեց գիտական խորհրդում քննարկել երկրում ստեղծված վիճակը և արձագանքել՝ նշելով, որ համալսարանը չի կարող անտարբեր լինել այդ հարցում: Գ. Գևորգյանն առաջարկեց օրակարգի հարցերը սպառելուց հետո անդրադարձ կատարել ստեղծված իրավիճակին և որոշել այդ հարցում անելիքները: Արհմիության նախագահ Ա. Ավետիսյանն առաջարկեց օրակարգում ներառել այդ հարցը, և գիտական խորհրդի անունից տալ գնահատական նոյեմբերի 9-ին Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի դեկավարների կողմից ստորագրված եռակողմ հայտարարությանը և դրանով պայմանավորված ստեղծված իրավիճակին:

Գ. Գևորգյանն առաջարկեց հաստատել օրակարգը՝ ներկայացված առաջարկությամբ.

1. «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»-ում լրացում կատարելու մասին (զեկ.՝ պրոռեկտոր Է. Ասրիյան):
2. Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2019թ. հարցման արդյունքների մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):
3. Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2019-2020 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):

4. Հաղորդում 2020-2021 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին (զեկ.՝ ուսումնամեթ. վարչ. պետ Հ. Ժամհարյան):
5. Տեղեկատվություն 2019-2020 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին (զեկ.՝ ուսումնամեթ. վարչ. պետ Հ. Ժամհարյան):
6. Հաղորդում ԵՊՀ ՈԻԳԸ 2019-2020 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ՈԻԳԸ նախագահ Մ. Փանոսյան):
7. ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները որոշելու մասին (զեկ.՝ ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյան):

Ընթացիկ հարցեր

8.1. «Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» աշխատանքը (հեղ.՝ դոցենտ Ակսել Պոտոսյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը՝ առաջարկված լրացմամբ:

1.Լսեցին – «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»-ում լրացում կատարելու մասին: Պրոռեկտոր Է. Ասրիյանը նշեց, որ առաջարկվում է կարգում ավելացնել առանձին բաժին, որը վերաբերում է առցանց կամ հեռավար պրակտիկայի կազմակերպմանը: Երկրում համավարակի տարածմամբ պայմանավորված՝ նախորդ ուստարվա երկրորդ կիսամյակից սկսած որոշ ֆակուլտետներում պրակտիկայի անցկացումը դարձավ անհնար: Առաջարկվող լրացմամբ այլընտրանք է ստեղծվում պրակտիկայի անցկացման համար՝ հնարավորություն տալով տարբեր ֆորսմաժորային իրավիճակներում կազմակերպել ուսանողների պրակտիկան, թեև ակնհայտ է, որ պրակտիկայի հեռավար անցկացումը չի կարող արդյունավետության առումով փոխարինել առկային:

Որոշեցին.- «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգում» կատարել լրացում՝ ավելացնելով 5-րդ բաժին հետևյալ բովանդակությամբ.

Որոշակի հանգամանքների (արտակարգ դրության, ռազմական դրության, համաճարակի և այլն) դեպքում ուսանողների պրակտիկան, ըստ անհրաժեշտության, կարող է կազմակերպվել հեռավար (առցանց) եղանակով:

Հեռավար (առցանց) եղանակով պրակտիկան կազմակերպվում և անցկացվում է (ներառյալ՝ գնահատվում է) սույն կարգի դրույթներին համապատասխան:

Հեռավար (առցանց) պրակտիկան, որպես կանոն, անցկացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով՝ օգտագործելով տարբեր հարթակներ և գործիքակազմ:

Ուսումնական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է ԵՊՀ դասախոսների կողմից՝ օգտագործելով համապատասխան գործիքակազմ՝ համակարգչային վիրտուալ լաբորատորիաներ, տարբեր թվային հարթակներ, ուսումնական տեսաֆիլմեր, ներկայացումներ և այլն:

Մասնագիտական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է սույն կարգի 8-րդ կետում նախատեսված վայրերում: Պրակտիկայի անցկացմանը մասնակցում են ֆակուլտետի կողմից նշանակված անմիջական ղեկավարը (մագիստրանտի դեպքում՝ թեզի ղեկավարը), ինչպես նաև ընդունող կողմի մասնագետները: Պրակտիկան իրականացվում է ծրագրին համապատասխան՝ օգտագործելով համապատասխան գործիքակազմ:

Մանկավարժական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում (որոշ դեպքերում նաև տվյալ ֆակուլտետի 1-ին կուրսերում): Պրակտիկայի անցկացմանը մասնակցում են ԵՊՀ-ից՝ մասնագիտական առարկայի դասախոս-մեթոդիստը, մանկավարժը, հոգեբանը, իսկ դպրոցից՝ տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը, դպրոցի տնօրենը և փոխտնօրենը: Մանկավարժական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է տվյալ պահին հանրակրթական ուսումնական հաստատության կողմից օգտագործվող հարթակ(ներ)ի միջոցով:

Հեռավար (առցանց) պրակտիկայի ընթացքը (մասնագիտական և մանկավարժական) գրանցվում է ուսանողի անհատական էլեկտրոնային օրագրում, որում ըստ ամսաթվերի ամփոփ ներկայացվում են կատարված աշխատանքները, պրակտիկայի տևողությունը, վայրը և կցվում «կարծիք-բնութագիրը»:

Որոշումն ընդունվեց 55 կողմ, 1 դեմ, 4 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

2.Լսեցին.- Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2019թ. հարցման արդյունքների մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն ընդգծեց, որ հաղորդման մասին զեկույցը նախօրոք ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին և ծանոթացել են դրան: Հաղորդման վերաբերյալ հարցեր չհնչեցին:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն: Զեկույցը կցվում է:

3.Լսեցին.- Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2019-2020 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին: Հաղորդման վերաբերյալ հարցեր չհնչեցին:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն: Ձեկույցը կցվում է:

4.Լսեցին. – Հաղորդում 2020-2021 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին: Հաղորդման վերաբերյալ հարցեր չհնչեցին:

Որոշեցին. – Հաղորդումն ընդունել ի գիտություն: Ձեկույցը կցվում է:

5.Լսեցին. – Տեղեկատվություն 2019-2020 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին: Հաղորդման վերաբերյալ հարցեր չհնչեցին:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն: Ձեկույցը կցվում է:

6.Լսեցին. – Հաղորդում ԵՊՀ ՈԻԳԸ 2019-2020 ուստարվա գործունեության մասին:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն: Ձեկույցը կցվում է:

7.Լսեցին. – ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները որոշելու մասին: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ գիտական խորհրդի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն ընտրովի անդամներ, որից 25 տոկոսը՝ սովորողներ: Նախկինում յուրաքանչյուր ֆակուլտետի տրվել էր մեկական ընտրովի անդամի տեղ, լրացուցիչ 1-ական տեղեր էին հատկացվել կենսաբանության, մաթեմատիկայի և մեխանիկայի, ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետներին: Գ. Գևորգյանն ընդգծեց, որ նոր որոշում չընդունելու դեպքում կգործեն նախկին քվոտաները: Վերջինս առաջարկեց բակալավրի կրթական ծրագիր իրականացնող 20 կրթական ստորաբաժանումներին՝ 19 ֆակուլտետներին և Ֆարմացիայի ինստիտուտին հատկացնել ընտրովի անդամի մեկական տեղ և ևս 2 լրացուցիչ տեղերը 1-ական քվոտայով հատկացնել ուսանողների թվով ամենամեծ հումանիտար և բնագիտական՝ միջազգային հարաբերությունների և ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների միջև: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նկատեց, որ կարելի է լրացուցիչ տեղերը բաշխել նաև մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումների միջև և ապահովել ներկայացուցչականություն, ինչին ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ նման կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումները շատ են, իսկ տեղերը՝ սահմանափակ: Աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ս. Գրիգորյանը ընդունելի համարեց բոլոր ֆակուլտետներին ընտրովի անդամի տեղ հատկացնելու սկզբունքը՝ չհամաձայնելով լրացուցիչ տեղերի հատկացման հիմքում սովորողների թվով առաջնորդվելը: Նա առավել ընդունելի

տարբերակ համարեց ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական թվակազմի սկզբունքը՝ նշելով, որ գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսը պետք է ընտրովի լինի, ուստի կարելի է չսահմանափակվել ֆակուլտետներից ընտրովի անդամների 22 թվով: Նա առաջարկեց 50-ից ավել պրոֆեսորադասախոսական կազմ ունեցող ֆակուլտետներին հատկացնել ընտրովի անդամի լրացուցիչ տեղեր: Ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ թվով 50 և ավելի պրոֆեսորադասախոսական համակազմ ունեցող ֆակուլտետները շատ են, իսկ քվոտաները քիչ, բացի այդ հնարվոր չէ ի պաշտոնե անդամների թվի կրճատմամբ մեծացնել ընտրովի անդամների քվոտաները՝ միննույն ժամանակ նշելով համալսարանի վարչական կազմից՝ վարչության պետերից ոչ բոլորի ներգրավվածությունը ձևավորվելիք գիտական խորհրդում: Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը նշեց, որ գիտական խորհուրդը պետք է ձևավորվի հաշվի առնելով ֆակուլտետների և ստորաբաժանումների գիտական պոտենցիալը, այսինքն՝ շեշտը պետք է դրվի ֆակուլտետների գիտական ներուժի վրա: Ըստ նրա՝ ի պաշտոնե անդամների քվոտայից համալսարանական որոշ վարչության պետերի փոխարեն կարելի կլինի մեծացնել ընտրովի անդամների թիվը, ինչին ի պատասխան՝ Գ. Գևորգյանը անընդունելի համարեց վարչության պետերի քվոտայի կրճատումը, քանի որ դրանք ներգրավված են ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման գործում: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նշեց, որ գիտական խորհուրդը համալսարանի կառավարման մարմին է, հետևաբար միայն մեկ սկզբունքով ընտրովի անդամների քվոտաների բաշխումը թերի է լինում: Վերջինս առաջարկեց հիմնական չափանիշ ընդունել համալսարանի գործունեությանը տվյալ ստորաբաժանման մասնակցության աստիճանը, ինչը կարող է որոշվել 3 ցուցիչներով՝ ուսանողների քանակ, աշխատակիցների քանակ և համալսարանի բյուջեում մասնակցության աստիճան: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը կարևորեց գիտական խորհրդում՝ որպես գիտական, ուսումնամեթոդական կառավարման մարմնում ներկայացուցչականության ապահովումը՝ առաջարկելով բակալավրի կրթական ծրագիր իրականացնող բոլոր ստորաբաժանումներին հատկացնել 1-ական տեղ, իսկ լրացուցիչ 2 տեղերը բաշխել 1-ական հումանիտար և բնագիտական ֆակուլտետների միջև՝ խելամիտ համարելով սովորողների՝ որպես հիմնական շահառուների թվի մեծությունը: Գ. Գևորգյանը նշեց, որ առավել նպատակահարմար է համարում առաջնորդվել ուսանողնոդների թվակազմի սկզբունքով և այդ պարագայում ամենամեծ ֆակուլտետներն են՝ հումանիտար բնագավառում միջազգային հարաբերությունների, իսկ բնագիտական ոլորտում՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետները, ուստի լրացուցիչ 2 տեղը կարող է բաշխվել այդ երկու ֆակուլտետների միջև: Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը կարևորեց գիտական խորհրդում ընտրովի անդամների թվի մեծացումը՝ ի հաշիվ վարչական կազմից նշանակվող անդամների: Գ. Գևորգյանը

արձագանքեց դիտարկմանը՝ նշելով, որ կրթական նոր ստորաբաժանումներ են ստեղծվել, որոնք նախկին գիտխորհրդի կազմում ներկայացված չէին, սակայն նոր կազմում պետք է տեղ գտնեն, ուստի բոլոր վարչության պետերը ներկայացված չեն կարող լինել նոր կազմում: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը կարևորեց առաջին հերթին գիտական խորհրդի ձևավորման հարցում ընկալելի լինելը, որպեսզի բաշխումը լինի ինչ-որ սկզբունքի հիման վրա՝ համամիտ լինելով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությանը:

Որոշեցին.- Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի ընտրովի անդամների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները սահմանել հետևյալ համամասնությամբ՝

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ-1

Աստվածաբանության ֆակուլտետ-1

Արևելագիտության ֆակուլտետ-1

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ-1

Ժուռնալիստիկայի ֆակուլտետ-1

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ-2

Իրավագիտության ֆակուլտետ-1

Կենսաբանության ֆակուլտետ-1

Հայ բանասիրության ֆակուլտետ-1

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ-1

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ-2

Պատմության ֆակուլտետ-1

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ-1

Ռուս բանասիրության ֆակուլտետ-1

Սոցիոլոգիայի ֆակուլտետ-1

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ-1

Քիմիայի ֆակուլտետ-1

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ-1

Ֆիզիկայի ֆակուլտետ-1

Ֆարմացիայի ինստիտուտ-1

Որոշումն ընդունվեց 50 կողմ, 4 դեմ, 5 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

8.1.Լսեցին. - «Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» աշխատանքը (հեղ.՝ դոցենտ Ակսել Պոտոսյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - «Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» աշխատանքը (հեղ.՝ դոցենտ Ակսել Պոտոսյան) երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՍՆ-ին:

Օրակարգային հարցերի սպառումից հետո գիտական խորհուրդն անցավ երկրում ստեղծված իրավիճակի քննարկմանը: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Գրիգորյանը նկատեց, որ երկիրը գտնվում է բավական ծանր իրավիճակում, երբ կարող են սկսվել քաղաքացիական բախումներ, և ԵՊՀ-ն այն կառույցն է, որ կարող է իր խոսքն ու սթափության հորդորն ուղղել իշխանություններին ու հասարակությանը: Ըստ նրա՝ պատերազմում պարտվեց ոչ թե հայ զինվորը, այլ քաղաքական իշխանությունը, որը վերջին երկու տարիների ընթացքում իր ուժերը չներդրեց պատերազմը կանխելու համար, ուստի քաղաքական ղեկավարությունը պետք է հեռանա և խոհեմության կոչ հղվի: Արհմիության նախագահ Ա. Ավետիսյանը նկատեց, որ ԵՊՀ-ն՝ որպես համազգային կառույց, կանգնած լինելով արցախյան շարժման ու պատերազմի ակունքներում, պետք է գնահատական տա ստեղծված իրավիճակին, գործող իշխանություններին և հանրությանն ուղղված կոչով հանդես գա: Վերջինս առաջարկեց գիտական խորհրդի անունից հրապարակվելիք հայտարարության տեքստի կազմման համար ստեղծել աշխատանքային խումբ: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նշեց, որ ԵՊՀ-ն չի կարող կրավորական կեցվածք որդեգրել ստեղծված իրավիճակում, պետք է իրավիճակին սթափ ու ռեալ գնահատական տրվի և կոչ ուղղվի հանրությանը, քանի որ վերջինս սպասում է դրան: Սովորող անդամ Տ. Սողոյանն առաջարկեց հայտարարության տեքստի մշակման հարցով հանձնաժողով ստեղծել, որը կկատարի նաև պատմական արձանագրումներ: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը նշեց, որ բոլորը համակարծիք են իշխանությունների հեռանալու անհրաժեշտության հարցում, քանի որ պարտված ղեկավարը հետագայում դժվար թե կարողանա առաջնորդել ժողովրդին: Նա նկատեց, որ պարտության մեջ մեղավորը միայն այս իշխանությունները չեն, այլ 30 տարվա գործունեությունն ու անգործությունը: Վերջինս հետաքրքրվեց վարչապետի հրաժարականից հետո սահմանադրաիրավական լուծումների մասին, ինչին ի պատասխան Գ. Ղազինյանը նշեց, որ Ազգային ժողովը ընդունում է կառավարության հրաժարականը, ընտրում է վարչապետ, ով ձևավորում է ճգնաժամային կառավարություն, իսկ հետագայում կազմակերպվում արտահերթ ընտրություններ: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանն անդրադարձավ այս օրերին մտավորականների, փորձագետների ներգրավմամբ տարբեր հարթակների ստեղծմանը, որոնք փորձում են ստեղծված իրավիճակում լուծումներ գտնել՝ նշելով, որ ԵՊՀ-ն գիտական ու մտավորական ամենամեծ հարթակն է, որը պետք է անպայմանորեն

արձագանքի: Ըստ նրա՝ 1992թ. ԵՊՀ-ն հայ ժողովրդին ուղղված համարձակ ու սթափեցնող հայտարարություն էր արել և հիմա էլ կա նման հայտարարության անհրաժեշտությունը: Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Հ. Մնացականյանը նշեց, որ ճիշտ կլինի դիտարկել երևույթները, այլ ոչ թե կոնկրետ պաշտոնյաներին, և պետք է հասկանալ հետայսու երկրի զարգացման ծրագրեր իրականացնելու հարցում անելիքները: Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը ևս ընդունելի համարեց ԵՊՀ-ի անունից հայտարարությունը՝ միաժամանակ շեշտելով դրանում երկրի կայունության ու գիտության զարգացման մասին կատարվելիք շեշտադրումների անհրաժեշտությունը: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը փաստեց, որ ԵՊՀ գիտական խորհուրդը չի կարող անտարբեր մնալ ստեղծված իրավիճակի հարցում: Պետք է հասկանալ, որ ամենամեծ կորուստը, վճարված գինը գոհերն էին, որն աններելի էր: Արդյո՞ք արժեր այդ գինը և դեռ ինչքան կարող էինք վճարել: Հռետորական հարց հնչեցրեց, թե ի՞նչ են արել նախկին բոլոր ու ներկա իշխանությունները պատերազմը կանխելու հարցում: Նրա համոզմամբ՝ վերջին պատերազմը 1994 թ. Բիշկեկյան համաձայնագրի հաջորդ օրվանից սկսած էր հասունացել, և խոսքը պետք է ասվի այդ իրողությունների հաշվառմամբ: Արցախյան առաջին պատերազմը հարկադրված պատերազմ էր, որում հայկական կողմը հաղթեց, և կողմերը գտնվում էին ինչ-որ հավասար պայմաններում: Հաղթանակից հետո մինչև սեպտեմբերի 27-ը ամեն ինչ արվել է նոր պատերազմի սկսման համար, և հնարավոր չէ ԵՊՀ-ն դուրս դնել դրանից, քանի որ ԵՊՀ-ն էլ ոչինչ չի արել պատերազմի կանխման հարցում: Քառորդ դար առաջ ասվել է, զգուշացվել է ստեղծված վիճակի մասին, սակայն դա ասողները ազգադավ են հռչակվել և լուրջ չեն ընկալվել: Այսօր ԵՊՀ-ն ունի լուրջ անելիք՝ հասարակության միավորման, հանդուրժողականության և կայունության ապահովման հարցում: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը նշեց, որ երկրում ստեղծվել է քաղաքական ճգնաժամ, և գիտական խորհրդի կողմից ընդունվելիք հայտարարության բովանդակությունը պետք է պարունակի հասարակության մեջ առճակատման վտանգից խուսափելու սթափության հորդոր, արտահերթ ընտրությունների կոչ, ինչպես նաև ուրվագծի որոշակի ճանապարհային քարտեզ:

Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նկատեց, որ 10-ամյակներ շարունակ հպարտացել ենք արցախյան առաջին հաղթանակով, թեթև ու անլուրջ ենք վերաբերվել ՀՀ առաջին նախագահի զգուշացումներին, Ադրբեյջանի հոխորտանքներին, Թուրքիայի հավակնություններին, առաջ քաշված «մեկ ազգ, երկու պետություն» դրույթին, Հայաստանի կողմից Արցախի անկախությունը չճանաչելու հանգամանքին և այլն: Ըստ նրա՝ նոր պատերազմն անսպասելի, անակնկալ չէր, անակնկալ էր միգուցե ժամանակի առումով: Հաղթանակի պտուղները երկար վայելելու պարագայում չպատրաստվելով պատերազմին՝ արդյունքը լինում է պարտությունը: Պարտության նախապայմանն այն է, որ բոլոր իշխանությունները թեթևամիտ են վերաբերվել կրթության հարցերին, մինչդեռ

անհրաժեշտ էր հզոր տնտեսություն, որին կսպասարկեր կրթությունն ու գիտությունը: Ռազմաարդյունաբերական համալիրը տեխնոլոգիական ու տնտեսական զարգացման երաշխիք է, և պետությունը, ցավոք, քայլեր չի իրականացրել այդ ողողությամբ: Անհրաժեշտ էին տնտեսական ու արդյունաբերական ենթակառուցվածքներ և հզորություններ: Նրա համոզմամբ՝ նոր իշխանությունների կողմից երկրի տեխնոլոգիական ու տնտեսական զարգացման ռեալ ծրագրեր չիրականացնելու, միայն սեփական իշխանությունը պահելու և «շեփորային հաղթանակների» դեպքում, կրկին լինելու են անդառնալի հետևանքներ: Ներկա իշխանությունն ունի իր մեղքի բաժինը, քանի որ այս ծանր իրավիճակն ստեղծվել է իրենց օրոք: Ստեղծված իրավիճակից ելքը մեկն է՝ կառավարության հրաժարական և արտահերթ ընտրությունների անցկացում: Գ. Գևորգյանն առաջարկեց հրապարակվելիք հայտարարության տեքստում ներառել հետևյալ կետերը՝ հանուն ազգային համերաշխության կառավարության հրաժարական, նոր անցումային կառավարության ձևավորում և մոտակա 6 ամսվա ընթացքում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացում: Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խ. Ներկարարյանը կարևորեց տեխնոկրատական կառավարումը՝ նշելով, որ պետության հիմնական ձեռքբերումները գրանցվել են հենց նման կառավարությունների օրոք, ուստի հրապարակվելիք հայտարարության մեջ անհրաժեշտ համարեց ընդգծել այդ հանգամանքը: Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Ա. Ժամկոչյանը ընդգծեց, որ Մայր բուհը մեր ժողովրդի համար կարևոր ու առանցքային նշանակություն ունի, ուստի հայտարարությունը պետք է հանրությանը հանդարտության ու համախմբման կոչ անի՝ կանխելու եղբայրասպանության տանող որևէ ճանապարհ:

Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանն առաջարկեց հայտարարության տեքստի կազմման համար ստեղծել աշխատանքային հանձնաժողով՝ անդամությամբ Գ. Ղազինյանի, Ռ. Մելքոնյանի, Վ. Դումանյանի: Վ. Դումանյանի ինքնաբացարկ հայտնելու պատճառով հանձնաժողովի կազմում առաջարկվեց ընդգրկել Ա. Ժամկոչյանին:

Աշխատանքային հանձնաժողովի ներկայացրած հայտարարության տեքստի նախագիծը քննարկվեց և գիտական խորհրդի անդամների առաջարկած խմբագրություններով ընդունվեց 48 կողմ, 5 դեմ, 8 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ: Հայտարարության տեքստը կցվում է:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

25.11.2020թ.